# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2020 թվականի N 01-Ա

## ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քվեարկության արդյունքներ, համայնքի ավագանին՝

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

Հաստատել Կոշ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 1 նիստի օրակարգը /կցվում է/:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

**ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 2020թ_ի բյուջեն հաստատելու մասին
2. Կոշի համայնքապետարանի աշխատակազմի եվ համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին
3. Կոշ համայնքի ղեկավարի ամսական դրույքաչափը հաստատելու մասին
4. ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի տարածքում օրենքով սահմանված 2020թ_ի տեղական տուրքերի եվ վարձավճարների հաստատման մասին
5. Համայնքի ղեկավարի 2019թ.-ի 4-րդ եռամսյակային հաշվետության մասին
6. Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների մասին:
7. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
8. Համայնքային սեփականություն համարվող հողատեսքը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Ենգիբարյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2020 թվականի N 02-Ա

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ_Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1 մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդված պահանջներով,Կոշ համայնքի ավագանին.

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 2020թ-ի բյուջեն համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

-

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2020 թվականի N 03-Ա

## ԿՈՇԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1 մասի 28-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով Կոշ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Կոշի համայնքապետարանի աշխատակազմի և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը /համաձայն հավելված 1/:

2.Հաստատել Կոշ համայնքի ենթակայության «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակազմի և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը /համաձայն հավելված 2/:

3. Հաստատել Կոշ համայնքի ենթակայության «Կվաշ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակազմի և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը /համաձայն հավելված 3-ի/:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ
համայնքի ավագանու 23/01/2020թ
թիվ 3-Ա որոշման

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇԻ ՀԱՆԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 18
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 16.25

| Հաստիքի անվանումը Ծածկագիրը | Հաստիքային միավորը | Դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Ամսական աշխատավարձ |
|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 250,000 | 250,000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 176,000 | 176,000 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 133,000 | 133,000 |
| **Համայնքային ծառայության պաշտոնները** | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 200,000 | 200,000 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 145,000 | 145,000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 145,000 | 145,000 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 145,000 | 145,000 |
| Առաջատար մասնագետ 3.1-4 | 1 | 145,000 | 145,000 |
| Առաջատար մասնագետ 3.1-5 | 1 | 145,000 | 145,000 |
| **Սպասարկող անձնակազմ** | | | |
| Գրադարանի վարիչ | 0.5 | 120,000 | 60,000 |
| Գրադարանավար | 0.5 | 120,000 | 60,000 |
| Ջրամբարի պահակ | 0.75 | 89,610 | 67,207 |
| Հավաքարար | 1 | 89,610 | 89,610 |
| Խմելաջրի փականագործ | 1 | 89,610 | 89,610 |
| Հարկահավաք | 1 | 133,000 | 133,000 |
| Անասնաբույժ | 0.5 | 89,610 | 44,805 |
| Աղբատար մեքենայի վարորդ | 1 | 89,610 | 89,610 |
| Աղբատար մեքենայի բանվոր | 1 | 89,610 | 89,610 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | 16.25 | | 2,207,452 |

ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ
համայնքի ավագանու 23/01/2020թ
թիվ 3-Ա որոշման

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը-8
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 6.75

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Դրույքաչափը | Ամսական աշխատավարձ |
|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 106000 | 106000 |
| Տնօրենի տեղակալ | 0.75 | 92618 | 69464 |
| Հաշվապահ | 0.5 | 89611 | 44805 |
| Ուսուցիչ | 1 | 92618 | 92618 |
| Ուսուցիչ | 1 | 89611 | 89611 |
| Ուսուցիչ | 1 | 92618 | 92618 |
| Հավաքարար | 0.5 | 89611 | 44805 |
| Պահակ | 1 | 89611 | 89611 |
| Ընդամենը | 6.75 | | 629532 |

ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ
համայնքի ավագանու 23/01/2(
թիվ 3-Ա որոշման

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՎԱՇ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔ

1. Աշխատակիցների թվաքանակը-26
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 14

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Հաստիքների քանակը | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/ | Ամսական աշխատավարձ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 125000 | 125000 | 125000 |
| 2 | Մեթոդիստ<br>Ուս. Գծով տնօրենի տեղակալ | 1 | 1 | 100000 | 100000 | 100000 |
| 3 | Հոգեբան | 0.5 | 1 | 120000 | 60000 | 60000 |
| 4 | Բուժքույր | 0.75 | 1 | 100000 | 75000 | 75000 |
| 5 | Հաշվապահ | | 1 | 77904 | 77904 | 77904 |
| 6 | Դերձակ | 0.5 | 1 | 120000 | 60000 | 60000 |
| 7 | Դաստիարակ | 0.56 | 8 | 120000 | 67200 | 537600 |
| 8 | Դաստիարակի օգնական | 1 | 4 | 77904 | 77904 | 311616 |
| 9 | Խոհարար | 1 | 1 | 90000 | 90000 | 90000 |
| 10 | Խոհարարի օգնական | 1 | 1 | 77904 | 77904 | 77904 |
| 11 | Տնտեսվար | | 1 | 77904 | 77904 | 77904 |
| 12 | Հավաքարար | | 1 | 77904 | 77904 | 77904 |
| 13 | Պահակ | 1 | 1 | 72751 | 72751 | 72751 |
| 14 | Օժանդակ բանվոր | 0.5 | 1 | 80000 | 40000 | 40000 |
| 15 | Դռնապահ | 1 | 1 | 77904 | 77904 | 77904 |
| 16 | Երաժշտության ուսուցիչ | 0.5 | 1 | 120000 | 60000 | 60000 |
| Ընդամենը | | 10.31 | 26 | 1515175 | 1217375 | 1921487 |

ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2020 թվականի N 04-Ա

## ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1 մասի 11-րդ կետով Կոշ համայնքի ավագանին.

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Կոշ համայնքի ղեկավարի 2020թ-ի ամսական դրույքաչափը 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2020 թվականի N 05-Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020Թ_Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1 մասի 18 և 19 կետերով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12 և 14-րդ հոդվածներով, Կոշ համայնքի ավագանին.

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի տարածքում 2020թ-ի տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի 1, հավելված 1.1:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

**Կոշ համայնքի ավագանու 2020թ.-ի հունվարի 23-ի**

**05-Ա որոշման**

## ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 Թ. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | |
|---|---|
| 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար. | |
| ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝ | ՀՀ դրամ |
| մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար | 15000 |
| բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ | |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 30000 |
| - 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ, | 50000 |
| - 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար հիսուն հազար դրամ, | 50000 |
| - 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար հարյուր հազար դրամ. | 100000 |
| գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ | |
| - մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ, | 3000 |
| - 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ. | 5000 |
| 2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ | 3000 |
| բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով, | |
| գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը. | |
| 3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ. | 5000 |

| | |
|---|---|
| 4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար` երկու հարյուր հազար դրամ. | 200 000 |
| 5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար` վաթսուն հազար դրամ. | 60000 |
| 6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար` հիսուն հազար դրամ. | 50000 |
| 7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | |
| ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 10000 |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 15000 |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 25000 |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 35000 |
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 65000 դրամ. | 65000 |
| բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 7000 |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում , | 10000 |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 15000 |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 25000 |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 35000 |
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 65000 |
| 10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար` երեք հարյուր հիսուն դրամ մեկ քառակուսի մետրի համար. | 350 |
| 11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար | |
| ա. առևտրի օբյեկտների համար` | 15000 |
| բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` | 30000 |
| գ. բաղնիքների (սաունաների) համար`, | 200 000 |
| դ. խաղատների համար` | 700 000 |
| ե. շահումով խաղերի համար` | 250000 |
| զ. վիճակախաղերի համար` | 100 000 |
| 12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է` ա. հիմնական շինությունների ներսում | |
| - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 5000 |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 10000 |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 15000 |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 20000 |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 25000 |

| | |
|---|---|
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 40 000. |
| բ. ոչ հիմնական շինությունների ներսում` | |
| - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 1000 |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 2000 |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4000 |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 6000 |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 10000 |
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 20000 |
| 14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար | |
| ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` | 2000 |
| բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` երեք հազար հինգ հարյուր դրամ | 3500 |
| գ. սոցիալական գովազդի համար զրո դրամ, | 0 |
| դ. այլ արտաքին գովազդի համար` հազար հինգ հարյուր դրամ | 1500 |
| 15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար` | 100 000 |
| 16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների` միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար` | 10000 |
| ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ | |
| 1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` | 15000 |
| 2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` | 5000 |
| 3) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` | 5000 |
| 4) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար . | |
| 5) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում. | Հավելված 1.1 |
| 6) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով. | 5000 |
| 7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար մինչև հազար դրամ փոխհատուցման վճար | 1000 |

Աշխատակազմի քարտուղար` Հ. Խաչատրյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1.1

Կոշ համայնքի ավագանու 2020թ.-ի հունվարի 23-ի

05-Ա որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 Թ. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ | ՀՀ ԴՐԱՄ |
|---|---|
| 1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական հիսունից մինչև չորս հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ, կամ | 150 |
| «2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով. | |
| 1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով` մեկ քառակուսի մետր մակերեսի համար հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ. | 100 |
| 2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով` մեկ քառակուսի մետր մակերեսի համար քսանից մինչև հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ. | 20 |
| 3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով` մեկ քառակուսի մետր մակերեսի համար տասնհինգից մինչև քսան Հայաստանի Հանրապետության դրամ. | 15 |
| 4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով` մեկ քառակուսի մետր մակերեսի համար երեքից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով` մեկ քառակուսի մետր մակերեսի համար ութ Հայաստանի Հանրապետության դրամ. | 3 |
| 5) արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում ավտոկայանատեղի)` մեկ քառակուսի մետր մակերեսի համար` հինգից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ. | 5 |
| 6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար` ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին` կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով. | |
| 7) շինություններում (այդ թվում առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով:». | |
| 8)Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով` մեկ քառակուսի մետր մակերեսի համար` հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ: | 50 |
| 9) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:». | |

ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2020 թվականի N 06-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2019Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1 մասի պահանջներով, համայնքի ավագանին՝

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

Համայնքի ղեկավարի հաղորդումը 2019թ.-ի 4-րդ եռամսյակային կատարողական մասին ընդունել ի գիտություն և հաստատել 2019 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը:

| Բյուջե | Ընդամենը | Վարչական բյուջե | Ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 90,618.5 | 81,312.5 | 9,306. 0 |
| Ծախսային մաս | 102,406.3 | 59,537.7 | 42868.6 |

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 հունվարի 2020 թվականի N 07 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ու Մ Է՝

1)համայնքի ղեկավարի կամավոր խնդիրների լուծման համար դրամական միջոցների տրամադրման չափորոշիչների հետևյալ սահմանները՝

1. Սոցիալապես և տնտեսապես անապահով ընտանիքներին------------------20000 դրամ
2. Միայնակ թոշակառուներին------------------------------------------------------------15000 դրամ
3. Բազմազավակ/4և ավելի երեխաներ ունեցող/ընտանիքներին----------------40000 դրամ
4. Ղարաբյան պատերազմի մասնակիցների ընտանիքներին------------------ -40000 դրամ
5. Ժամկետային զին ծառայության մեջ գտնվող զին ծառայողների ընտանիքներին---20000 դրամ
6. Տարերային աղետից տուժած կարիքավոր ընտանիքներին՝ /մրկանման քամիներ, կարկուտներ/ կախված վնասի չափից ---------------------------------------------30000 մինչև 50000 դրամ
7. Հաշմանդամության կարգ ունեցող բնակիչներին՝
   ա) 1-ին կարգ ունեցող հաշմանդամներին-----------------------------30000 դրամ
8. Բարձրագույն կրթության ոլորտում աջակցել կարիքավոր ուսանողներին---------50000 դրամ
9. Հարազատին կորցրած բնակիչներին---- 100000 դրամ
10. Սպորտի բնագավառում հաջողությունների հասած բնակիչներին------------20000 դրամ

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից :

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
8. [illegible]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2020 թվականի N 08 -Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8/1 կետի, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. N1918-Ն որոշման պահանջներով, համայնքի ավագանին՝

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

**ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի** վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, **6.2463 հա** (կադաստրային ծածկագրեր՝ **0214-0001-հց 2,4407հա և 0215-0003-հց 3.8056հա**) գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության այլ հողատեսքը փոխել և դարձնել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ ընդերքօգտագործման նպատակով:

Կողմ -8

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2020 թվականի N 09-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67 հոդվածով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, համայնքի ավագանին՝

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

Տալ թույլտվություն համայնքային սեփականություն համարվող հողատեսքից՝ 106-0019 ծածկագրից 0,7հա գյուղ.այլ հողատեսքը, 121-006 ծածկագրից 1,0հա գյուղ. այլ հողատեսքը, 132-005 ծածկագրից 0,7հա գյուղ. այլ հողատեսքը, 105-001 ծածկագրից 1,2448 հա արոտ հողատեսքը, 104-001 ծածկագրից 0,6958հա արոտ հողատեսքը և 127-001 ծածկագրից 0,7 հա արոտ հողատեսքը աճուրդ-վաճառքով օտարելու: Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով: Ինչպես նաև 132-0057 ծածկագրից 0,7268 հա 4-րդ կարգի վարելահողը: Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 50%-ի չափով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

w

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ